ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«29» մարտի 2019 թվականի № 65-Ա

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«ՎԱՀԵ ՎԱՆՅԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)**

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ՎԱՀԵ ՎԱՆՅԱՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2019 թվականի փետրվարի 23-ին թիվ 44-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի հունիսի 13-ի թիվ 01/29.4/3018-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 05.06.2018թ-ի դրությամբ պետական տուրքի մասով՝ 520.8 հազար (հինգ հարյուր քսան հազար ութ հարյուր) ՀՀ դրամ և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 375.8 հազար (երեք հարյուր յոթանասուն հինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-126 պայմանագրի 3.4 կետի 3.4.1 և 3.4.26 ենթակետում նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: 2018 թվականի հունիսի 13-ի թիվ 01/29.4/3018-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2019թ. փետրվարի 23-ի թիվ 44-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթն երկու

անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Հանձնաժողովը, փաստական հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկելով՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները գտավ, որ սույն վարչական վարույթն ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից վերացվել են վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով և ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված խախտումները, Ընկերությունը կատարել է ապառքների գծով բոլոր վճարումները, ինչը հաստատվում է Ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացրած համապատասխան վճարման անդորրագրերով:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՎԱՀԵ ՎԱՆՅԱՆ» ՓԲ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 23-ին թիվ 44-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Ընդերքի գործակալության պետին՝ եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

3/29/2019

X

VERIFIED OCSP 29-Mar-19 12:59:35 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118